

ԿԵԱՆՔ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՈՐ ԱՆՈՒՆՆԵՐԸ

Ինչպէս յայտնի է, Հայաստանը այժմ բաժնւած է 27 վարչական միաւորների, որոնց մի մասի անունը վերջերս փոխւած է: Այսպէս, նախկին Ղարափիլիսան այժմ դարձել է Կիրովական, նախկին Աղբարան՝ Ամասիա, Քէշիշէմզը՝ Միկոյեան, Փաշալուն՝ Ազիզբէկով, Ղուրդուղուն՝ Հոկտեմբերեան եւայլն: Այսպիսով, առ 1935 թ. վերջը, Հայաստանի 27 վարչական միաւորները կրում են հետեւեալ անունները. — *Ամասիա, Ստեփանաւան, Ալլահշէրդի, Իջևան, Շամշադին, Լենինական, Կերովական, Դիլիջան, Արթիկ, Ապարան, Ախտա, Թալին, Աշտարակ, Կոտայք, Նոր-Բայազէտ, Հոկտեմբերեան, Վաղարշապատ, Ղաթարլու, Վէդի, Մարտունի, Բաղարշէշար, Միկոյեան, Ազիզբէկով, Սիսիան, Գորիս, Ղափան, Մեղրի (Տես քարտէզը):*

Նոյն ձեւով փոփոխութեան ենթարկւած են եւ բազմաթիւ ուրիշ վայրերի անուններ: Այստեղ առաջ եմք բերում ցանկը այն վայրերի, որոնք վերջերս վերանունւած են Հայ. Գործ. Կոմիտէի կողմից: Առաջ դնում ենք հին անունը, յետոյ՝ նորը:

ԱՊԱՐԱՆԻ ՇՐՋԱՆ.

Բաշապարան — Ապարան.

Ալիքուչակ — Քուչակ.

Տամբըլու — Մուսեան. (Աս. Մուսեանի անունով):

Քէշիշէմզ — Գեղարտ.

Մուլլաղաուս — Զովունի.

ԱՂԱՐԱՅԻ ՇՐՋԱՆ.

Շրջանը վերանունւած է Ամասիայի:

Շրջանի կենտրոնը՝ Ամասիա:

Թուրքի Ղըզլիլիսա — Կարմրաւան.

Ղարանաւագ — Ենիեւլ.

Ալիսան — Գետիկ.

Սուլթանապատ — Շուրապատ.

Ղարափիլիսա 3-րդ — Զորաշէմ.

ԱՇՏԱՐԱԿԻ ՇՐՋԱՆ.

Օհանավան — Օհանաւան.

Ղըզլիքամուր — Ոսկեվագ.

Ղարդաւան — Փոքրաւան.

ԱԼԼԱՀՍԻՐԻՆԻ ՇՐՋԱՆ.

Խաչի Դուռ — Ծաղկաշատ.

Որնակ — Ակներ.

ԱԽՏԱՅԻ ՇՐՋԱՆ.

Քարանսարա — Աքարբէկեան (Յայտնի

չէկիստ Աքարբէկեանի անունով):

Ելենովկա — Սեւան.

Փաշագիւղ — Մարմարիկ.

Սուխոյ Ֆոնտան — Ֆոնտան.

Ն. Միխայլովկա — Միսիւսմա.

ԱՐԹԻԿԻ ՇՐՋԱՆ.

Զըրփըլի — Զրափի.

Խաչիլիսա — Փարոս

Բողագինասան — Զորակապ.

Բոգդոզան — Սարակապ.

Մուլագեմէշ — Մարալիկ.

Մեծ Արիւսիկ — Մանքաշ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԻԱՆԻԱԾ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՈՒ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՔԱՐՏԷԶ



ԲԱՍԱՐԳԷԶԱՐԻ ՇՐՋԱՆ.

Ազգիլիսա - Ազադ.
Սատանաթաչ - Գիւնէյ.
Ջարգիբիլ - Ջառէնդ.
Ղըրիսըուլաղ - Ակունք.
Կարակոյիւն - Ազիզու.

ԳԻԼԻՋԱՆԻ ՇՐՋԱՆ.

Ջիբուլիւ - Մովագիւղ.
Պողոսիլիսա - Շեմախեան (Բուլշիկ
եղիշէ Շեմախեանի անունով):

ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՇՐՋԱՆ.

Հաջի Նազար - Կամօ (Բուլշիկ Կամօի
անունով):
Մեծ Բեափանակ - Մուսայէլեան (Բուլ-
շիկ Մուսայէլեանի անունով):
Ղարափիլիսաքուրքի - Ախուրիկ.
Ալեքսանդրովկա - Ղարիբջանեան (Բուլ-
շիկ Բ. Ղարիբջանեանի անունով):

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՇՐՋԱՆ.

Շրջաքն յաճախ կոչուում է եւ Վաղ-
պատ՝ վաղարշապատի կրճատած ձևը:

Հաջի Ղարա - Այգեշատ.
 Խաչափարալի - Զահմաք.
 Վ. Թուրքմանլու - Ապագայ.
 Ն. Թուրքմանլու - Լուսագեղ.
 Քեդրիալու - Արշալոյս.
 Հաջիար - Մրգաստան.
 Շորլու Դէմուրչի - Դէմուրչի.
 Շորլու Մէհմանդար - Մէհմանդար.

ԿՈՏԱՅՔԻ ՇՐՋԱՆ.

Բաշգամի - Գամի.
 Ղըզղալա - Աստղաքերդ
 Դաւալսարաքա - Աւագ.
 Գէոյֆիլիսա - Կապուտան.
 Քեարփջլու - Գեղադիք.
 Ճարդուան - Հրագդան.

ՂԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ՇՐՋԱՆ.

Շրջանի անունը փոխած է *Կիրովա-*
կան :

Ղարաֆիլիսա - Կիրովական.
 Նիկիտիս - Ֆիդիտովո (Բուշեիկ վ.
 Ֆիդիտովի անունով) :
 Խաչի Գիւղ - Դերէդ.
 Ղամշկուտ - Եղեգնուտ.

ՍՏԵՓԱՆԱԿԱՆԻ ՇՐՋԱՆ.

Ստեփանաւանը նախկին Զալալ Օղլին
 է :

Ղըզըլֆիլիսա - Կըզըլդաշ.
 Վորոնցովկա - Կալինինո.
 Զուջաֆէնդ - Կըզըլշափակ.
 Կոտուրքուլաղ - Կաթնադրիւք.

ՔԵՇԻՇՔԵՆԴԻ ՇՐՋԱՆ.

Շրջանը վերածած է *Միկոյեան* :
 Քէշիշէնդ - Միկոյեան.
 Հասաֆէնդ - Շատին.
 Ղոյրուր - Գետաֆ.

ՓԱՇԱԼՈՒԻ ՇՐՋԱՆ.

Շրջանի նոր անունն է *Աղեղբէկով*
 (Բուշեիկ Մաշադի Աղեղբէկովի անու-
 նով) :

Փաշալու - Աղեղբէկով.
 Սուլքանաբէկ - Բարձրունի
 Իքդուան - Գիւլիստան.

ԻՋԵԻԱՆԻ ՇՐՋԱՆ.

Քրդեւան - Ենոֆուան (Բուշեիկ Ենոֆ
 Մկրտումեանի անունով) :
 Խաւարձոր - Լուսաձոր.
 Կունէն - Գետաշէն.

ԹԱԼԻՆԻ ՇՐՋԱՆ.

Մաղարջուղ - Շենիկ.
 Սլսաչի - Շարշի.
 Ղուլդարվիշ - Ոսկեքաս.
 Փիւմալաֆ - Արեգ.
 Օձի Ղըշլաղ - Զվստան.
 Զոռա - Սորիկ.
 Սչանլու - Ալքոնա.
 Դուշէնդ - Բառոժ :

ՂՈՒՐԴՈՒՂՈՒԼՈՒԻ ՇՐՋԱՆ.

Շրջանի նոր անունն է *Հոկտեմբերեան*.
 Սարդարաքաղ - Հոկտեմբեր.
 Ղուրդուղուլու - Արմաւիք.
 Հաջի Բայրամ - Բալսչալար.
 Քեարիմարիս - Սովետական.
 Մոլլաբաղալ - Բաղալ.
 Մոլլաբայագէտ - Բամբակաշատ.

ՆՈՐ ԲԱՅԱՋԷՏԻ ՇՐՋԱՆ.

Քէոսամանեդ - Բատիկեան (Բուշեիկ
 Բատիկ Բատիկեանի անունով) :

ՍԻՍԻԱՆԻ ՇՐՋԱՆ.

Ղարաֆիլիսա - Սիսաւան.
 Ալիլու - Սալվարդ.

ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ.

Քէոյադուան - Ծովինար.
 Ալիղըրլիս - Աստղաձոր.

Զոյախաչ — Զոյափար.
Աւդալաղալու — Վաղաշէն.

ՂԱՄԱՐԼՈՒԻ ՇՐՋԱՆ.

Դալուլար — Դալուր.
Գեղակալու — Մարտիկեան (Բոլշեիկ Սէրգո Մարտիկեանի անունով):
Դոնդուզիան — Զանդիլար.
Սէյիդէնդ — Շուրաֆէնդ.
Ասորի Դուին — Վերին Դուին.

Հայ Դուին — Ներքին Դուին.
Իմանշալու — Միջեան (Բոլշեիկ Լիպ. Միջեանի անունով):

ՎԵԴՈՒ ՇՐՋԱՆ.
Քէշիշվերան — Զովաշէն.
Մոլլախմէդ — Օթլախ.
Քէշիշդաղ — Դաշէնդ.
Դաւալու — Արարատ.

ՀԵՐԿ ՈՒ ՅԱՆ

Գորգէն Միթարեանը —մեր ամենէն նուրբ երիտասարդ դրողատեներից մէկը— տարեմուտի առթիւ, «Յուսարեւր»-ում (31 դեկտ.), փորձում է դնահատու-թեան ենթարկել անցած զրական տար-ւայ «Հերկ ու Յանը» եւ ասպազայի որոշ հեռանկարներ ցոյց տալ:

Գ. Միթարեանի դիտողութիւններն ու դատողութիւնները մտածել են տա-լիս, եւ դրանց մէջ է նրանց արժէքը: Այստեղ առաջ ենք բերում նրա յօդա-ծի հիմնական մասը՝ յապաւելով միայն այն, որ շօշափած հարցերի անհրա-ժեշտ տարրը է, կամ շեղում է բուն խնդրից:

Անցաւ տարի մըն ալ եւ հայ երկնա-կամարին տակ, մթին ու մուշլ, գրակա-նութիւն մը մշակեցաւ:

Հիմներուն կողմէ, եւ նորերէ՛ն ալ:

... Քանի մը գիրքեր հրատարակե-ցան. վէպ, պատմածք, մէկ երկու հա-տոր ֆերբւած եւ շատ մը յօդւած՝ համ-դէսներուն ու օրաքերքերուն մէջ:

Յայտնութիւն՝ նոր գործի կամ նոր դէմքի՝ չկայ: Հեիհեւ կեանք մը, օր-ւան շարժումին հետ փախլու միգով. եւ գործեր ու յօդւածներ՝ որոնք հագիւ ուշադրութիւն գրաւեցին. լայնածի՛ր ու-շադրութիւն, նորութեան մը, ինքնատը-

պութեան մը, խորութեան մը բերած ցնցումովը:

Լոնց պատկերապաշտ Զարեանը. ընդ-հատեց գիւղաչունչ Համաստեղը, ցրե-ցաւ Փարիզի անհանդարտ խումբը, որ հանելի էր իր ազմուկովն ու գծած ամ-բարտաւան շարժումներովն իսկ. պատ-նէշին վրա մնաց նորէն լայնաշունչ Օ-շականը, իր Մնացորդաց-ովը, որ սա-կայն մնաց առանձին, տարօրինակ մա-կատագրով. ումանք չկարդացին. շատեր չհասկցան, յոգնեցան ուրիշներ, եւ ո-ւմանք ալ վախցան ու վար փաշեցին իրենց ձայնը. անոնցմէ այս վերջինները՝ ո-րոնք երկու տասնեակ էջնոց գրքի մը կը սպասեն, բառեղէն պատկերներ հիւսե-լու եւ դատարկահունչ պերճախօսութիւն մը ցուցադրելու համար:

Այս բոլորը՝ միգ միայն, հայ գրա-կանութիւնը կենդանի պահելու. հայ մտքի կանքիզը՝ անմար, ինչպէս կայ նոյն միգը՝ հայ կեանքը ողջ եւ հայ դէմքը հարազատ պահելու համար:

Դրական գործ, անշուշտ, այս ինք-նապաշտպանութիւնն ալ:

Կա՛յ ուրեմն աշխատանք եւ հաւատ-ք՝ հայ մտքի ստեղծագործութեան հանդէպ:

Այս աշխատանքը կը կատարուի վան-քերէն սկսած մինչեւ Հայաստան, ուր